№ 97 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՄԱՅԻՍԻ (15 մայիսի)
1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՄԱՅԻՍԻ (15 մայիսի) № 97

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մայիսի 1-ից մինչև տարւայ վերջ
Քաղաքում —32 ր., արտասահման—50 ր.
Ամսական — 4 ր., „ — 8 ր.
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 35 կ., երկաթուղային կայարաններում 40 կոպ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction «Mschak»
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆօն № 2—63

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում իւրաքանչիւր տողատեղին 50—30 կոպ., Կովկասից դուրս՝ 60—40 կոպ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել թէ՛ հին հասցէն և թէ 1 րուբլի:

Շապին-գարահիսարցի
Գարեգին Սահակեանին

Մնալով Անդրկովկասից, յանձնել եմ «Մշակի» խմբագրութեան ձեզ յանձնելու թէ գրած և թէ կարմիր [illegible] Թիֆլիս գալուց, մտէք խմբագրատուն և ստացէք: Իսկ գոյքերը մնում են Յովսէփի մօտ: Ինձ կարող էք գտնել կամ Արմավիր և կամ Մայկոպ:
ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(օ. մ.) 401 4—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ԴՕՆԽԻՆ
Նախկին ներքին-ժամանակեայ ասիստենտ Պարիզի և Վիէննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների, ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 10 ից մինչև 12-ը և երեկ. 4—7 ը. Միքայէլեան փող. 76 (Թիֆլիսի ժողովրդական գիմնազ)։
տա. (ա. օ.) 378. 160—8

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
ՄԵԿՆԵՑ ՊԵԱՏԻԳՈՐՍԿ
Կովկ. Հանքային Ջրերը,
որտեղ կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը իր նախկին բնակարանում՝ Пятигорскъ, Верхній бульв. (Романовск. пр. № 5) д. кн. Гирей.
տա. (օ. մ.) 330 15—12

ԲԺԻՇԿ
Զ. Ա. Թառումեանց
Վեներական և նեարդային հիւանդների ընդունելութիւնը՝ ներքին և երեխայոց, ամեն օր, բացի կիրակիից, եր. 5—7 ժամը։
Սոլոլակ, Բեհբութեան փ. № 48, վերևի յարկը, բնակ. 4.
տա. (Ա. Հ. Հ.) 267 20—17

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԵՅՄ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Նիստ մայիսի 26-ի)

Սէյմի պատմական վերջին նիստը կայանալու էր մայիսի 25 ի երեկ.։ Սակայն յետաձգվեց ամսիս 26 ին։ Առաւօտեան ժ. 10-ից պալատի ներսում նկատելի էր արտասովոր կենդանութիւն։ Պալատի պահակախումբը ուժեղացված էր և ամեն մի դռան մօտ նշանակված էր խիստ հսկողութիւն, որպէս զի ոչ ոք առանց տոմսակի մուտք չը գործէր պալատ և մանաւանդ սէյմի դահլիճը։ Պալատի առաջ սկսվեցին խմբվել բազմութիւններ, որոնք տաք-տաք վիճաբանում էին։ Ընդհանուր տրամադրութիւնը կասկած չէր թողնում, թէ սէյմի այդ օրվայ նիստը ունի մի առանձին խոշոր հետաքրքրութիւն, թէ կատարվելու է մի պատմական կարևոր ակտ։

Երկու-երեք ժամ շարունակ այդ լարված ու սպասողական դրութիւնը շարունակվեց պալատի առաջ և ներսում։ Շարունակ աւտօմօբիլներ ու կառքեր էին կանգնում պալատի առաջ, իսկ ներսում արդէն տիրում էր մեծ կենդանութիւն։ Սէյմի դահլիճը մտնելու ցանկացողների թիւը, և հատկապէս վրացիների, անհամար էր։

Վերջապէս ժամը 12 և 50 րոպէին, երբ սէյմի անդամները գրաւել էին իրենց տեղերը, իսկ մամուլի և դիւանագիտական մարմնի օթեակները (որ նստած էր և Թիֆլիսի գերմանական ներկայացուցիչ Կայզեր) յեղափոխական կազմակերպութիւնների և ազգային խորհուրդների ներկայացուցիչների ու հասարակութեան համար յատկացված տեղերը բոլոր նշանակութեամբ լիքն էին, ինչպէս և միջանցքներում խռնվել էր մեծ բազմութիւն,—նախագահ Չխէիձէն յայտարարում է սէյմի նիստը բաց և յայտնում օրակարգը.

1) Հաշտութեան բանակցութիւնների ընթացքը և
2) Ընթացիկ գործեր.

Առաջին հարցի մասին զեկուցում է մինիստր նախագահի պաշտօնակատար՝ ներքին գործերի մինիստր Ռամիշվիլին։

Կառավարական հաղորդագրութիւնը

«Սէյմի քաղաքացի անդամներ, [illegible] կանալի է այն յուզումը, որով հասարակութիւնը ցանկանում է իմանալ [illegible] բանակցութիւնների [illegible] մասին, որովհետև Բաթումում վճռվում է Անդրկովկասի ժողովուրդների բաղդը։ Եւ ցաւօք սրտի պէտք է վկայեմ կառավարութեան կողմից, որ այդ բանակցութիւնները չեն տալիս մեր սպասած արդիւնքը։

«Ընդամէնը Բաթումում մինչև օրս տեղի է ունեցել մի պաշտօնական նիստ՝ մի կողմից մեր, միւս կողմից Թիւրքական և գերմանական պատուիրակութիւնների մասնակցութեամբ։ Եւ որպէս զի պարզ լինի հաշտութեան բանակցութիւնների ընթացքը ձեր բոլորի համար, ես կը կարդամ կտորներ այդ պաշտօնական նիստի արձանագրութիւնից»։

Մինիստրը կարդում է կտորներ, որոնցից երևում է, որ Հիւսիսային Կովկասի ժողովուրդների կողմից Հայդարովը, ողջունելով հաշտարար վեհաժողովը, հաւանում է յայտնել, թէ Հիւս. Կովկ. ժողովուրդների ներկայացուցիչը կը ցանկանայ մասնակցել այդ վեհաժողովին։ Թիւրքաց և անդրկովկասեան պատուիրակութիւնները համաձայնութիւն են տալիս դրան, իսկ գերմանական պատուիրակութիւնը ընդունել է այդ ի տեղեկութիւն։

Ապա մինիստրը շարունակեց. «Մեր պատուիրակութիւնը յայտնեց, թէ բանակցութիւնների հիմք պէտք է ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, բայց այդ յայտարարութեանը Թիւրքաց պատուիրակութիւնը առարկեց, թէ այդ պայմանագիրը ստորագրելուց յետոյ առաջ են եկել մի շարք նոր հանգամանքներ, որոնք և ստիպում են Թիւրքիային չը հիմնվել բացառապէս Բրեստի պայմանագրի վրա։ Այն հայեացքների այդ տարբերութեան պատճառով պատուիրակութիւնների միջև տեղի ունեցան պաշտօնագրերի փոխանակութիւններ։

«Երկրորդ [illegible] նիստում Բաթումում այն հարցի շուրջը եղաւ, թէ արդեօք Անդրկովկասը պատրաստ է ընդունելու միմիայն Թիւրքիայի հետ դաշնակցութեան [illegible] Թիւրքաց պատուիրակութիւնը յայտնեց, թէ հաշտութեան պայմանագիրը իր գլխաւոր էութեամբ կապվելու է Թիւրքիայի և Անդրկովկասի միջև, իսկ Գերմանիան, Աւստրիան և Բուլղարիան կատարելու են խնամակալական դեր։

«Այդօրինակ պայմաններում մեր պատուիրակութեան դրութիւնը աւելի քան դժուարացաւ։ Այդ դժուարին կացութիւնը բարդացաւ երրորդ հանգամանքից։ Դա այն է, որ Բաթումում, բացի մեր պաշտօնական պատուիրակութիւնից, գործում են նաև մահմեդական առանձին ներկայացուցիչներ, որոնք նսեմացնում են պաշտօնական պատուիրակութեան գործունէութիւնը և ձգում նրա պրեստիժը Թիւրքաց և գերմանական պատուիրակութիւնների աչքում։ Ցաւօք մեր պատուիրակութեան յայտարարութիւնները այդ կողմնակի մահմեդական ներկայացուցիչները չէզոքացնում են։

«Մայիսի 15-ի առ. ժ. 6 ին Թիւրքաց պատուիրակութեան նախագահ Խալիլ-բէյը և զօրահրամանատար Վեհիբ փաշան ներկայացրին պաշտօնագիր, թէ ժամը 7-ից Թիւրքաց զօրքերը Ալեքսանդրապոլից դէպի Ջուլֆա [illegible]։

«Սէյմի քաղաքացի անդամներ, այդ բանը ոչ թէ սպառնալիք էր, այլ ուղղակի օկուպացիա։ Թիւրք զօրքերը գրաւում են Երևանի նահանգի մասերը։ Ձեզ յայտնի է, որ մեր պատուիրակութիւնը այդ դէպքերի առիթով կտրուկ բողոք յայտնեց Բաթումում։ Միւս կողմից անդրկովկասեան կառավարութիւնը հրահանգեց զինուորական իշխանութիւններին, որպէսզի հայկական զօրաբանակի հրամանատարը գնահատէ Նազարբէկեանին տրված վերջնագիրը և վերջին, մինչև կառավարութիւնը յարաբերութեան մէջ կը մտնէ Թիւրքաց պատուիրակութեան հետ։ Սակայն այդ միջոցը չօգնեց։

«Մեր զօրքերը ետ քաշվեցին, և այժմ Ալեքսանդրապոլում գրաւվում է սահմանաբաժան գիծ։

«Անդրկ. կառավարութիւնը բողոքեց նաև գերմանական պատուիրակութեան, որի կողմից ֆօն Լոսովը պատասխանեց, թէ անդրկ. կառավարութեան բողոքը ինքը տեղեկացրեց Թիւրքաց պատուիրակութեան նախագահին, նաև Աւստրիայի և Բուլղարիայի կառավարութիւններին։

«Այսպիսով, երբ մեր պատուիրակութեան ջանքերը պաշտպանելու Անդրկովկասի ժողովուրդների շահերը չէզոքանում էին միւս կողմնակի պատուիրակների հակառակ գործողութիւններից Բաթումում, ուրիշ խօսքով ասած, երբ պատուիրակութեան քայլերը աջակցութիւն չէին գտնում Անդրկովկասի բոլոր ժողովուրդների կողմից, երկրի մէջ սկսվեց խմորում։ Այսպէս, Գանձակում, ուր գտնւում սօցիալիստական բաժինների դժգոհելու կամ բոլշևիկեան շարժման պատճառով, յամենայն դէպս մասսաների մէջ սկսվեց արտասովոր [illegible], որ չը կայ ուժեղ իշխանութիւն Անդրկովկասում։ Դրա հետևանքն եղաւ մինչև իսկ այն, որ տեղական բեկերը դիմում են Թիւրքիայի կողմը։

«Ես իմ պարտականութիւն եմ համարում ներկայ ստեղծված դրութեան մէջ արտաբերել ի լուր ամենքի, որ մենք չենք կարող սպասել դրսից [illegible] հաշտութեան բանակցութիւններից։ Մենք կարծում ենք, որ այժմեան դրութեան մէջ հաշտութիւն չի կայանայ, կառավարութիւնը յանցանք կը գործէ, եթէ այդ չը յայտարարէ սէյմի և ժողովրդի առաջ... Մենք յուսահատութեամբ ենք նայում ապագային»...

Սէյմը որոշում է անցնել կառավարական հաղորդագրութեան քննութեանը։

Ծերեթելիի ճառը

Առաջինը ամբիոն է բարձրանում սօց.-դեմ. ֆրակցիայի լիդէր Ծերեթելին։

«Քաղաքացիներ։ Կառավարութեան ներկայացուցիչը նկարագրեց հաշտութեան բանակցութիւնների ամբողջ ընթացքի պատկերը, և մնում է, որ կատարվի մի վճռական քայլ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար։ Բաթումում արտացոլվեց մեր ժողովուրդների մէջ տիրող կացութիւնը։ Սօց.-դեմ. ֆրակցիան միշտ կողմնակից է եղել ժողովուրդների միութեանը, կամեցել է, որ դաշնութիւն ունենան մի կամք—դեմոկրատիայի կամքը։ Դա մեր իտէալն էր, այն հողը, որի վրա պէտք է միանային Անդրկովկասի ժողովուրդները։

«Սակայն այժմ մենք հասել ենք այն կէտին, որ մեր այդ իտէալը՝ Անդրկ. ժողովուրդների մի կամքը, [illegible] խորտակվեց [illegible] Այժմ մենք [illegible] խոստովանել ենք գտնում անել այն վճռական քայլը, որը պէտք է դառնայ դեմոկրատիայի կամքը։

«Եւ այս րոպէին, երբ թշնամին խուժել է մեր երկրի սահմանները, և չը կայ միութիւն մեր ժողովուրդների միջև, մենք այս րոպէին չենք կարող չանել այդ քայլը։

«Սօց. դեմ. կուսակցութիւնը սկզբից հետամուտ էր փրկել մեր երկիրը մի դեմոկրատիկ կամք ստեղծելով։ Փրկելով երկիրը՝ մենք պաշտպանված էինք տեսնում անդրկ. ժողովուրդներից ամեն մէկի շահերը։ Մենք հրատարակեցինք Անդրկովկասի անկախութիւնը նրանից յետոյ, երբ ռուսական դեմոկրատիայի ճակատը քայքայվեց և Անդրկովկասը կտրվեց Ռուսաստանից։ Այդ ժամանակ մենք կամեցանք միացնել Անդրկ. ժողովուրդների ներքին ուժերը՝ թշնամու դէմ մաքառելու համար։ Անդրկովկասը անկախ հրատարակելով, մենք երաշխիք ունէինք, որ ժողովուրդներից ոչ մէկը չի կարող իր քաղաքական ուղղութիւնը փաթաթել միւսների վզին։

«Սակայն անկախութեան յայտարարելուց յետոյ մեր յոյսերը ի դերև ելան։ Զափազանց գաղտնի դէպքերը, որոնք մեր ընտրած կառավարութիւնից պահանջում էին լարված գործունէութիւն, ցոյց տուին, թէ անդրկ. ժողովուրդների շահերը բնաւ միօրինակ չեն։ Դեմոկրատիայի թշնամի [illegible] Անդրկովկասի ներսում բուռն գլուխ առան, աւելի իսկ ուժեր հանդէս։ Ու այդ ուժերը աւելի զարգացան նրանից յետոյ, երբ արտաքին թշնամին աւելի մօտեցաւ մեզ...

«Թիւրքիայի առաջխաղացումը զարկ տուեց տեղական մահմեդականութեանը՝ ձգտել դէպի նա։

«Մենք շատ լաւ գիտենք, որ չի կարող գոյութիւն ունենալ պետական մի ամբողջութիւն, եթէ նրա մի մասը հրաժարվում է զէնքով պաշտպանել ամբողջ պետութեան շահերը։ Մեզ թվում էր, թէ անկախութիւնը կը խորտակէ շահերի տարբերութիւնը, առաջ կը բերէ բոլորի մէջ պետական հայրենասիրութիւն, անդրկ. ժողովուրդները կը զգան իրենց հասարակական պետական ընդհանուր բարիքի աջողութեան համար։ Ուշադրութեան առնելով կրօնի ու ցեղի տարբերութիւնը, մենք հաւատում էինք, որ ժողովուրդները միասին կը պաշտպանեն ընդհանուր պետութեան շահերը։ Բայց այդպէս չեղաւ։ Պետական միութիւն չը ստացվեց։ Անդրկ. հանրապետութիւնը գոյութիւն ունեցաւ սոսկ անունով, իսկ մեր հաշտարար պատուիրակութիւնը ընկաւ անելանելի դրութեան մէջ։

«Սարսափը նրանում չէ միայն, որ թշնամին օկուպացիայի է ենթարկում մեր երկրի նահանգները, խօսում է վերջնագրերի լեզուով, այլև նրանում է, որ մեր պետութիւնը չունի այնպիսի մարմին, որի մէջ արտայայտվէր ամբողջ ազգաբնակութեան կամքը և որ ձեռք առնէր միջոցներ [illegible] կործանող տարրերի դէմ։ Մեր պատուիրակութեան հետ զուգընթաց գերմանական և թիւրքական պատուիրակութիւնների հետ խօսում են ուրիշ ներկայացուցիչներ էլ, որոնք աշխատում են ի չիք դարձնել մեր պատուիրակութեան ջանքերը։ Պատմութեան մէջ դեռ այդպիսի դրութիւն չէ եղել։ Դրա հետևանքները տեսանք. բանակցութիւնների ընթացքում կատարվում է տերիտօրիական գրաւում... Մեր ազգաբնակութեան մահմեդական մասը ոչ միայն չէ պաշտպանում ժողովրդին թշնամու դէմ, այլև ընդհակառակը համակրում է վերջինիս և անցնում նրա կողմը։ Արևելեան Անդրկովկասը պաշտպան չէ մեր կառավարութեան։ Այդպիսով ազգաբնակութեան մի մասը՝ հայերը՝ չը նայած ամեն ջանք գործ դրին պաշտպանվելու թշնամու դէմ, բայց և այնպէս սահմանված եղաւ զիջել իր տերիտօրիան թշնամուն։ Ազգաբնակութեան միւս մասը՝ մահմեդականութիւնը՝ անցաւ Թիւրքերի կողմը յօժարակամ։ Անդրկ. հանրապետութեան մէջ մնաց միայն երրորդ մասը՝ վրացիք՝ որի տերիտօրիան առայժմ գրաւված չէ թշնամուց։ Պէտք է ասենք, որ վրացիք դեռ չեն սպառել իրենց ուժերը թշնամուն դիմադրելու համար։ Մնացել են Թիֆլիսի և Քութայիսի նահանգները։ Հայերը պոկված են մեզանից, մահմեդականները անջատվեցին, միւս կողմից դեռ խօսվում է ֆիկտիվ անդրկովկասեան հանրապետութեան, դեմոկրատական մի ճակատի մասին,—այս ամենը ստիպում են վրաց ժողովրդին ստեղծել պետական օրգանիզմ, [illegible]

«Կրկնում եմ, ներկայ րոպէին, երբ անդրկ. ազգաբնակութեան մի մասը կամայ թէ ակամայ կտրված է մեզանից, մեր պարտականութիւնն է ասել վրաց ժողովրդին—դու մենակ ես, դու չունես պետական կազմ, դու չունես քո պատուիրակութիւնը Բաթումում, դու կորցրել ես քո դաշնակիցներին, քո դրութիւնը վատ է։ Եւ եթէ ուզում ես ապրել, պէտք է ստեղծես քո սեփական պետականութիւնը, քո պատուիրակութիւնը (Ծափահարութիւն վրացիների մէջ)։

«Այս յայտարարութիւնը նախաձեռնում է սօց. դեմ. ֆրակցիան, զգալով նաև պատասխանատուութիւնը։ Այդ քայլը անխուսափելի է, գիտակցում ենք, որ դա արդիւնք է վրաց ժողովրդի շահերի, հետամուտ է պահպանելու նրա ֆիզիքական գոյութիւնը, ինչպէս և միջազգային կացութիւնը։ Միաժամանակ զգում ենք, որ դա յուսահատական քայլ է փրկելու վրաց ժողովրդին Թիւրքիայի ճանկերից, իսկ փրկելով վրաց ժողովրդին՝ փրկում ենք և ամբողջ դեմոկրատիային... Յայտարարելով անկախութիւն, վրաց ժողովուրդը չը պէտք է իր շահերը հակառակ դնէ միւս հարևան ժողովուրդների շահերին, այլև պէտք է պաշտպան լինի նրանց շահերին։

«Անդրկ. ազգաբնակութեան այն մասը, որ օրհասական քայլով փոխեց իր օրիէնտացիան (մահմեդականները), պէտք է հասկանայ, որ իր ազգի շահերը կը պաշտպանվեն միմիայն անդրկովկասեան դեմոկրատիայի միաբանութիւնը վերականգնելով։ Մենք կատարում ենք դեմոկրատիայի ընդհանուր գործ. փրկելով մեր ժողովրդին, ստեղծում ենք պայմաններ, որ միւս ժողովուրդների շահերը ևս ապահովվեն։ Մենք թէև զրկված ենք շատ զէնքերից, բայց մեր զօրավիգն է մեր միութիւնը։

«Մենք, սօց. դեմոկրատներս, դէմ էինք, որ մի տերիտօրիայի վրա ստեղծվէր մեր պետութիւն, բայց երբ մեր ակնկալութիւնները ջախջախվեցին ոչ-դեմոկրատիկ տարրերի կողմից, մենք չենք կարող ներկայումս չը յայտնել բոլորին, որ այլ ևս գոյութիւն չունի անդրկ. դեմոկրատական միութիւն, որ մեր տերիտօրիայի խոշոր մասը գրաւված է թշնամուց, ուստի պէտք է փրկենք մնացած մասը։

«Հրատարակելով Վրաստանի անկախութիւնը, այսօրվանից անդրկովկասեան սէյմը չէ կարող այլևս գոյութիւն ունենալ։

Ռուստամբէկովի ճառը

«Մուսավաթ», «Հումմէթ», Ռուսաստանի մահմեդականների և մահմեդ. սօցիալիստ. բլոկի կողմից հանդէս է գալիս Ռուստամբէկովը։

Քաղաքացիներ, վրաց ժողովրդի ներկայացուցիչները վճռել են անջատվել Անդրկովկասեան հանրապետութիւնից և ստեղծել իրանց ինքնուրոյն քաղաքական կեանքը։ Ի հարկէ ժամանակը չէ, որ ես բանակռւի բռնվեմ թէ վրաց ժողովրդի ներկայացուցիչ Ծերեթելիի և թէ կառավարութեան ներկայացուցիչ Ռամիշվիլիի հետ, որոնք մի քանի պատճառաբանութիւններ արին մահմեդականների վերաբերմամբ։

Մահմեդական ֆրակցիաները պաշտօնապէս յայտնում են, [illegible] վրաց ժողովուրդը, որ եղել է ճնշված, իրաւունք ունի ազատ ապրելու։ Մենք ողջունում ենք նրա անկախութեան յայտարարութիւնը, բայց, նկատի առնելով հանգամանքները, որոնք, մեր կարծիքով, այստեղ սխալ կերպով լուսաբանեցին, մենք յայտնում ենք, որ այս րոպէիս Անդրկովկասի ժողովուրդների համար առանձին էական հիմունքներ չը կան ինքնուրոյն կեանքի համար։ Վրացիների բերած պատճառները թերի են։ Ընդունելով որ սէյմը բաղկացած էր Անդրկ. ժողովուրդների ներկայացուցիչներից, բայց որովհետև վրացիք այլևս չեն ուզում միասին աշխատել, ուստի սէյմը չէ կարող այսուհետև գոյութիւն ունենալ։ Անկեղծօրէն ցանկանալով վրաց ժողովրդին աջողութիւն նոր քաղաքական կեանքում, մենք հաւատում ենք, որ ապագայում Անդրկովկասի ժողովուրդները կը միանան ու կը մնան համերաշխ։

Մինիստր Ռամիշվիլին, առարկելով Ռուստամբէկովի ասածներին, թէ իր յայտնած դէպքերը իրականութեանը չեն համապատասխանում, բերում է երեք փաստեր 1) Ախալցխայում մահմեդականները միացել են Թիւրքերին. Անդրկ. հանրապետութեան պաշտպանութեան համար կազմված զօրքերի մի մասը (աջարացիք) կռւում են Թիւրքերի հետ միասին մեր դէմ (ձայներ մահմեդական պատգամաւորների աթոռներից). 2) գերի առնվածները ազատվելու են միայն յօգուտ Թիւրքիայի և 3) Գանձակ մտած Նուրի-բէյը ցնծութեամբ է ընդունվել մահմեդական բնակիչներից (ձայներ մահմեդականների աթոռներից՝ «հարևաններից ենք սովորել»)։

Ապա հերթով խօսում են Աղամալովը, Մեհարամովը, Սեմենովը, Խոջաևը, Բերեզովը, Մելիք-Ասլանովը, Ռամիշվիլին, Լասխիշվիլին, Գոբեչիան, Գվազավան և Ծերեթելին, որոնց ճառերի բովանդակութիւնը կը տանք հետևեալ անգամ։

Ի վերջոյ, նախագահը յայտնում է, թէ վիճաբանութիւնները դադարած են, հռետորների ցանկը փակված է։

Սէյմը քուէարկութեամբ, ձայների առաւելութեամբ, ընդունում է սօց.-դեմոկրատական ֆրակցիայի առաջարկած հետևեալ բանաձևը.

«Ի նկատի ունենալով որ հաշտութեան ու պատերազմի հարցի նկատմամբ երևան եկան արմատական տարաձայնութիւններ անդրկովկասեան անկախ հանրապետութիւնը ստեղծած ժողովուրդների միջև, ուստի և անհնարին է հանդէս բերել մի հեղինակաւոր իշխանութիւն, որը խօսէ Անդրկովկասի և նրա անկախութեան անունից, սէյմը վկայում է Անդրկովկասը իբրև կազմալուծված և հրաժարվում է իր լիազօրութիւններից»։

Նախագահը ժամը 3 և 50 րոպէին յայտարարում է, որ Անդրկովկասի սէյմը այլ ևս գոյութիւն չունի։

Դրանից յետոյ անմիջապէս կայացաւ վրաց ազգային խորհրդի հանդիսաւոր նիստը։

Ե.

(Վերջը միւս անգամ)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Արդէն որոշված է վրաց կառավարութեան մօտաւոր կազմը.—Պրեմիեր-մինիստր՝ Ռամիշվիլի, արտաքին գործերի մինիստր՝ Ա. Չխենկելի, երկրագործութեան՝ Խոմերիկի, զինուորակ. Գէորգաձէ, արդարադատութեան Մեսխիով, լուսաւորութեան՝ Լասխիշվիլի, ֆինանսների՝ Գ. Ժուրուլի։

ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ

Ադրբէյջանի շրջանի անջատումը կատարված փաստ է։ Գանձակի ամբողջ նահանգում և Բաքուի գաւառում ու Երևանի նահանգի մի մասում մեր կօմիսարները հեռացված են և նրանց տեղը նշանակված են Թուրք պաշտօնեաներ։

ՂՐԻՄԸ ԱՒՏՕՆՕՄ

Արտաքին աշխարհից միանգամայն կտրուած լինելով, մենք կղզիաբնակների նման չը գիտենք ինչ է կատարվում մեր ափերից դուրս։

Այսպէս, օրինակ, մենք ոչ մի տեղեկութիւն չունենք Ղրիմի մասին։

Բաթումից եկողները պատմում են, որ Ղրիմը յայտարարված է աւտօնօմ մուսուլմանական կառավարութիւն՝ Թիւրքիայի հովանաւորութեան ներքոյ։

Վերջերս Բաթումից այնտեղ է մեկնել Թիւրքական մի պատգամաւորութիւն՝ աւտօնօմ Ղրիմում կարգուկանոն մտցնելու համար։

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

(Ուղիղ հեռագրաթելով)

Դիլիջանում ժողովրդի և գաղթականութեան տրամադրութիւնը փոխվում է դէպի լաւը։ Զօրքերն ու ժողովուրդը պատրաստակամութիւն են յայտնում կռւել և պաշտպանել իրանց իրաւունքները։

Ղազախում ծեր զինւորներն ու գիւղացիները անգամ զօրամասեր են կազմում և պատրաստվում են կռւելու։

Սարդարաբադի յաղթութիւնը ամենուրեք ընդհանուր ոգևորութիւն է առաջ բերել։

Երեւանում ազգաբնակութիւնը զոհաբերում է ամեն ինչ։ Ամբողջ քաղաքը հաց է թխում զօրքերի համար։

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԲՐԵՍՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Պարիզից հեռագրում են «Новый Вѣкъ»-ին.

«Հայկական ազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչը Պարիզում՝ Պօղոս Նուպար փաշան Բրեստ Լիտովսկի դաշնագրի առիթով գրում է «Matin»-ում.

«Համաձայն հաշտութեան պայմանագրի՝ բոլշևիկեան կառավարութիւնը պարտաւորվում է բոլոր միջոցները ձեռք առնել դատարկելու ոչ միայն Արեւելեան Անատօլիան, բայց առանց յապաղելու նա դատարկելու է նաև Արդահանը, Կարսը և Բաթումը։ Սոսկալի է մտածել, թէ ինչ հետևանքներ կունենայ այդ անզգուշութիւնը ամբողջ ազգաբնակութեան համար։ Հրամանը տրված է և ռուսական զօրքերի մի մասը հեռացել է ճակատից, բայց վրացի և հայ զինւորները, կամաւորների օգնութեամբ, շարունակում են պաշտպանվել, իմանալով թէ ինչ աղէտներ են սպառնում ազգաբնակութեանը իրանց հեռանալու դէպքում։ Ամենավատ երկիւղները արդարացան Տրապիզոնի առումից յետոյ։

«Հայ ժողովուրդը երբէք չի եղել այնպիսի սարսափելի դրութեան մէջ, ինչպէս այժմ։ Նրան սպառնում է կատարեալ ոչնչացում։ Մեն-մենակ թողնված, հայերը կը ճզմվեն Թիւրքերի ոտքերի տակ։ Դիմադրութեան չը հանդիպելով, Թիւրքերը կարող են անցնել Բրեստի պայմանագրի որոշած սահմաններից։ Գերմանիան և Թիւրքիան կարող են իրանց ազդեցութիւնը տարածել Կովկասի վրայով և Թուրքեստանի վրա և նրանից դէնը մինչև Չինաստանի սահմանները։ Այն ժամանակ համիսլամութեան և համաթիւրանիզմի բոցը կըբռնկվի և Պարսկաստանում և Աւղանիստանում»։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Դիլիջան, 24 մայիսի

Ախթալա կայարանում և Սանահինում կենտրոնացած են 25,000-ից աւելի փախստականներ։ Թիւրքերի արշաւանքը թոյլ չէ տալիս մեզ տեղաւորել շրջակայ գիւղերում կամ վերադարձնել փախստականներին Ղարաքիլիսա։

Մեսրոպ եպիսկոպոս

—

Բակուրիանի, 26 մայիսի

Փախստականների ալիքը վերադառնում է իր տեղը։ Թիւրքերը ետ քաշվեցին իրանց նախկին դիրքերը՝ հին ռուս Թիւրքական սահմանի վրա, Կարզախ գիւղի մօտ։ Պանիկան անցնում է. կողոպտված է միայն Կարզախի մի մասը Թիւրքերի ձեռքով, իսկ քաղաքը կողոպտված է իրանց հայերի ձեռքով, որոնք նոյնպէս շատ անպիտանութիւններ են կատարել։ Տէր Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի ԼՈՒՐ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, կովկասեան զօրք. գեներալ Սիլիկեանին, պատճէնը Թիֆլիսի և Երևանի Հայ Ազգային Խորհուրդներին, և բոլոր այն քաղաքներին ու գիւղաքաղաքները, ուր կան հեռագրատներ, բաժանմունքներ, զօրապետներին, կօմիսարներին և հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին.

Զօրաբանակի շտաբից

Զօրաբանակի հրամանատարի կարգադրութեամբ հաղորդում եմ ամենալայն ծանուցման համար զօրաբանակի հրամանատարի կոչը.

Հայեր! ծանր փորձութեան մէջ է մեր ժողովուրդը։ Բազմադարեան Թիւրքական ստրկութիւնից յետոյ ժողովուրդը հասկացաւ, որ այսուհետև այսպէս շարունակվել չէ կարող, և վճռեց կամ զէնքով նուաճել իր ազատութիւնը ու փայլուն ապագայ, կամ պատւով կորչել։

Դժբաղդութեամբ սանձված զօրքը, շնորհիւ իր մէջ ընկած շատ անպիտանների տարրերի, շուտով կորցրեց իր ոգևորութիւնը և հետևանքում ստացվեցին անաջողութիւններ մէկը միւսից աւելի ծանր։

Մեր կառավարութեան սկսած հաշտութեան բանակցութիւնները Թիւրքերի հետ և նրանց հետ կնքված զինադադարը խախտվեց Թիւրքերի կողմից ամենաբարբարոս կերպով. Թիւրքերը առանց որևէ նախազգուշացման, օգտվելով զինադադարի դրութիւնից, անակնկալ առաջացան և գրաւեցին Ալէքսանդրօպոլը։ Այդ հանգամանքը վերջնականապէս քայքայեց զօրքին, և նրանք նոյնիսկ չը հետապնդվելով հակառակորդից՝ թողին իրանց շարքերը և անկարգ ամբոխով փախան, դիմելով Թիֆլիս, թողնելով բաղդի կամքին բոլոր ռազմամթերքներն ու ուտելիքների պաշարները։

Թւում էր, թէ ամեն ինչ կորաւ, և մեր ոխերիմ թշնամին մտածում էր մի բան՝ շարունակել առաջխաղացումը դէպի հայկական հողի խորքը, ոչնչացնելով հենց դրանով ազգաբնակութեանը տեղահան լինել, կորցնել իր ունեցածը, մատնելով իրան սարսափելի աղքատութեան և նոր ստրկութեան Թիւրքերի ձեռքում։

Սակայն Աստուծոյ ողորմութեամբ Երևանի քաջերի զօրամասը, որի դէմ Թիւրքերը, չը նայած կնքված զինադադարին, նոյնպէս առաջխաղացման դիմեցին, չը սասանեց և, վանելով հակառակորդի յարձակումները, ինքը դիմեց առաջխաղացման և երկօրեայ կռւի մէջ ետ շպրտեց Թիւրքերին ու ներկայում հետապնդում է նրանց։

Երևանի զօրամասի աջողութիւնը ոգևորել է Ալէքսանդրօպոլի զօրաբաժնի զինւորներին, կազմվեցին զօրախմբեր, զօրամասեր և զօրագնդեր, որոնք արագութեամբ ետ գնացին՝ մի մտքով, մի ցանկութեամբ՝ յաղթել կամ մեռնել։

Դժբաղդաբար, բոլոր մթերքները նահանջի ժամանակ կորան, ըստ որում զէնքի ու փամփուշտների ահագին քանակութիւն ընկաւ ազգաբնակութեան ձեռքը։ Պարենաւորման պահեստները աւերված են փախստականների ձեռքով. շատ զինւորներ կարողացել են ցրվել իրանց տները։

Դէպի մահվան կռիւ գնացող զօրքը պէտք է հագնված ու կուշտ լինի։

Հայեր, եթէ դուք կամենում էք փրկել ձեր ընտանիքները, ձեր հարստութիւնը, եթէ դուք չէք կամենում այլևս սոսկալի ստրկութիւն, ինչպէս Թիւրքերի բռնակալ լծի տակ հեծող ձեր եղբայրները, եթէ դուք չէք կամենում, որպէսզի ամբողջ հայ ժողովուրդը կորչի, եկէք, զէնք կրելու ընդունակներդ, եկէք ի պաշտպանութիւն ձեր ժողովրդի։

Եկէք ձեր զէնքով ու փամփուշտներով և վերցրէք ձեզ հետ հինգօրեայ ուտելիք, մինչև այստեղ կարելի լինի կազմակերպել մթերքների գործը զօրքի համար։ Զոհաբերեցէք զօրքի համար հաց, գետնախնձոր և այլ մթերքներ։ Յիշեցէք, որ ամեն մի յապաղում ներկայ րոպէին կործանարար է, որ եթէ մենք այժմ չը կարողանանք պաշտպանել մեր ազատութիւնը և մեր հարստութիւնը զէնքը ձեռներիս, մենք արժանի չենք գոյութիւն ունենալ իբրև կարող ժողովուրդ և վայ մեզ ու մեր յետագայ սերունդին, որ միմիայն անէծքով կը յիշէ մեզ։

Մենք պէտք է յոյս դնենք միայն մեր ոյժերի վրա. ու եթէ այժմ անյապաղ առանց րոպէ կորցնելու մենք անկարող լինենք օգնել զօրքին մարդկանցով, ուտելիքով, ռազմամթերքով, մենք կը կորչենք։

Յիշեցէք՝ ոյժով միայն կը նուաճենք մեզ համար լուսաւոր ապագայ կամ երբէք չենք տեսնի մենք այդ ապագան, ոչ էլ մեր յետագայ սերունդը կըտեսնէ։

Նուէրները ուղղել ինտենդանտական և արտիլերիական պահեստները և տեղական հասարակական կազմակերպութիւններին ու տեղեկացնել զօրաբանակի շտաբին։

Հայկական զօրաբանակի հրամանատար՝
Գեներալ Նազարբէկեան
Հայկ. զօրաբանակի շտաբի պետ՝
Գեներալ Վիշինսկի

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ

Ամսիս 26-ին Կօնսերվատօրիայի դահլիճում գումարված մի մեծ հասարակական ժողով, նախաձեռնութեամբ Հայ Ժողովրդական Կուսակցութեան, որին մասնակցում էին ազգային հասարակական - կուլտուրական, բարեգործական հաստատութիւնների և հայրենակցական միութիւնների ներկայացուցիչները, քննելով օրվայ հրատապ հարցերը, կայացրեց հետևեալ որոշումը.

Հայ Ժող. Կուսակցութեան կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ Կօնսերվատօրիայի դահլիճում գումարված խորհրդակցութիւնը, որին մասնակցում էին ազգային, հասարակական, կուլտուրական, բարեգործական և կրթական հաստատութիւնների, հայրենակցական միութիւնների, վաճառականութեան, արհեստաւորաց, հոգևորականութեան և այլ դասակարգերի ներկայացուցիչները, թւով աւել քան 300 հոգի, լսելով զեկուցումները օրվայ հրատապ դէպքերի և ազգային ճգնաժամի մասին, որ կատարեցին Հ. Առաքելեան, Ս. Յարութիւնեան, Մ. Բերբերեան, Իս. Ամիրեան, կայացրեց հետևեալ որոշումը.

«Խորհրդակցութիւնը, 1) ի նկատի առնելով հայութեան ներկայ տագնապալի դրութիւնը. 2) նկատի ունենալով, որ հայ ժողովուրդը մնացել է մեկուսացած Անդրկովկասում և հայկական շրջանները ենթարկված են աւերման թէ տնտեսական և թէ մարդկային զոհերի տեսակէտից, և սկսվել է փախստականական ահագին շարժում. 3) ի նկատի ունենալով, որ Անդրկովկասի կենտրոնական իշխանութիւնը մատնված է կազմալուծման և ծրագրված է Վրաստանը անկախ հռչակելու, որով Անդրկ. կառավարութիւնը լուծվելու է. 4) ի նկատի ունենալով, որ հաշտութեան պատուիրակութեանը չէ աջողվում կնքել հաշտութիւն, 5) ի նկատի ունենալով, որ Հայոց Ազգային Խորհուրդը իբր գերագոյն ազգային մարմին իր ներկայ կազմով և նրա մեծամասնութեան վարած քաղաքականութեամբ չը կարողացաւ ապահովել ազգի գոյութիւնը,

«Ժողովը որոշեց 1) վերակազմել Ազգային Խորհուրդը, լրացնելով կազմը հասարակական նոր տարրերով, 2) Նորակազմ Ազգային Խորհրդին տալ ժամանակաւորապէս կառավարչական ֆունկցիաներ՝ հայ ժողովրդի շահերը և իրաւունքները պաշտպանելու համար, 3) յանձնարարել նոյն Խորհրդին ձեռք առնել հարկաւոր միջոցներ պատերազմին վերջ տալու և սահմանելու մեր հարևան ազգերի հետ համերաշխութեան առողջ պայմաններ, 4) միջոցներ ձեռք առնել փախստական թափառող ժողովրդին վերադարձնելու իր վայրերը, 5) կազմել մի յանձնաժողով այս որոշումներն ի կատար ածելու և Յանձնաժողովի անդամներ կարգել Հայ Ժող. Կուսակցութեան պրեզիդիումը ի դէմս Մ. Պապաջանեանի, Հ. Առաքելեանի, բժ. Յ. Այվազեանի, Իս. Ամիրեանի, բժ. Կ. Ստեփանեանի, Ս. Յարութիւնեանի, Մ. Բերբերեանի Մ. Բունիաթեանի և Ստ. Մալխասեանի և հետևեալ անձանց՝ Յ. Խունունց, Յ. Սպէնդիարեան, Ալ. Պապովեան, Պօղ. Դօլուխանեան, Ա. Բարխուդարեան, Մ. Թումանեան, Ա. Բաբախանեան, Ա. Մելեան, Եր. Խանզադեան, Գ. Տէր-Պետրոսեան»։

Ժողովի մանրամասնութիւնները կը տանք յետոյ։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուղղակի գծով Վլադիկավկազից Սարիկեան քահանան յայտնում է Ս. Յարութիւնեանին, որ տեղական կառավարութեան կարգադրութեամբ թոյլատրված է ուղարկել փախստականներին Կազբեկից աստիճանաբար։

Գ. Լևոնեանը յայտնում է, որ Կազբեկից փախստականներին մաս-մաս ուղարկում են դէպի Վլադիկավկազ Սարիկեան քահանան, միւս ազգութիւնների և կառավարութեան ներկայացուցիչները։ Լևոնեան խնդրում է շուտով ուղարկել խնամատարութեան մինիստրութեան լիազօր Ս. Տիգրանեանին դրամով։

—

Մեր պարտականութիւնն ենք համարում յայտնել հայ հասարակութեան, որ չը նայած տեղական լրագիրներում ամեն օր տրվում են տեղեկութիւններ, թէ ամեն բան արվում է փախստականների համար, սակայն այդ բոլորը մնում է լոկ թղթի վրա և այն իրական, շատ ու անհրաժեշտ միջոցները, որոնք պէտք է գոնէ փոքր չափով դիւրութիւն տային դժբաղդ փախստականների դաղթին և ուտելիքին, կամ շատ թերի են, կամ բոլորովին չեն ձեռք առնվում։ Մնում է, որ ամեն մի գիտակից հայ, առանց պաշտօնի և դասակարգի խտրութեան, չը զլանայ և անկեղծ եռանդով նուիրվի այն մարդասիրական ու ազգային վսեմ գործին, որին այս րոպէիս կարիք ունեն հազարաւոր զոհ հայ փախստականները…

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

Ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը եւ թանչըցը, Նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիւծուածութիւնն ու ներհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պելը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պելը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպերմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպերմին-Պելի հետ ոչինչ առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտերապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպերմին-Պելին կայ ամենուրեք։

(№ 1) 6—5

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петроградъ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր, երեկոյեան ժամի 6 ին, Կ. Հ. Բ. Ընկ. տան մէջ կը կայանայ Հայրենակցական Միութիւնների կենտրոնական խորհրդի գործադիր մարմնի նիստը՝ քննելու համար մի շարք կարեւոր խնդիրներ։

◆ Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարում է. «Քաղաքում տարածվում են դիտաւորեալ ու չարամիտ լուրեր այն մասին, թէ հայ դաղթականները դէպի հիւսիս անցնելով՝ ինչ որ ռազմական նպատակներ են հետապնդում, և այդ իբր թէ Հայոց Ազգային Խորհրդի նախաձեռնութեամբ ու հրահանգներով։ Յայտարարում ենք՝ որ դժբաղդ ժողովրդի այս աղէտաւոր գաղթը, սկսված Ալէքսանդրօպոլի և շրջանի յանկարծակի և անակնկալ գրաւումից յետոյ, ուրիշ պատճառ չունի և չէ կարող ունենալ, բացի օսմանեան զօրքերի առաջխաղացութիւնը, որի առաջից խուսափող հայ ազգաբնակութիւնը խուճապով բռնված թողնում է տուն, տեղ, տնտեսութիւն և խայտառակված երես է տալիս մեր սահմաններից։ Քաղաքական և ռազմական իրադարձութիւնների անկայուն վիճակը տարաբաղդաբար հնար չը տուեց Ազգային Խորհրդին վճռապէս դէմ լինել և արգելել սկսված աղէտաւոր տեղահանութիւնը, սակայն պէտք ենք համարում յայտարարել, որ Ազգային Խորհուրդը չէ կարող քաջալերել այդ գաղթը»։

❀ Մի խումբ հայ վաճառականներ կազմել են մի ընկերութիւն 5 միլիօն ր. դրամագլխով, նպատակ ունենալով Գերմանիայից Անդրկովկաս և Անդրկովկասից Գերմանիա ապրանքներ ներմուծել ու արտածել։ Ընկերութեան անունն է՝ «Հայ-գերմանական առևտրական ընկերութիւն»։

◆ Սէյմի իրաւաբանական մասնաժողովը առաջարկեց ռուսաց ազգ. խորհրդին մշակել օրինագիծ՝ տալու իրան օտար ազգի պետութեան հպատակի իրաւունքներ առ ի պաշտպանութիւն Անդրկովկասից հեռացող ռուսների գոյքի անդրկովկասեան հանրապետութեան սահմաններում։

❀ Սէյմի իրաւաբանական մասնաժողովը բացատրեց Համառուսական Քաղաքների Միութեան կովկասեան կօմիտէին, թէ Միութեան գոյքը, որպիսին գտնվում է անդրկովկասեան հանրապետութեան տերրիտօրիայի վրա, կազմում է վերջինիս սեփականութիւնը։

❀ Սէյմի իրաւաբանական մասնաժողովը գտաւ, որ զինւորա-դատական արդարադատութեան գոյութիւնը իբրև ապարատի, որ գործում է քաղաքացիական արդարադատութեան հետ զուգընթաց, չէ համապատասխանում րոպէի պահանջներին։

◆ Ֆինանս. մինիստրութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ պետական բանկի կենտրոնական բոլշևիկեան վարչութիւնը առաջարկել է իր բոլոր գրասենեակներին և բաժանմունքներին խուսափել վճարելուց ի պահ դրված և ընթացիկ հաշիւների գումարները տեղական կազմակերպութիւնների ու իշխանութիւնների կարգադրութեամբ։

❀ Յ. Ոսկանեանի դրամա-օպերէտային խումբը, որ դադարեցրել էր իր ներկայացումները, երէկ ամսիս 26-ին որոշեց վերսկսել. վճռվեց մի նոր ծրագրով ներկայացում կազմակերպել յօգուտ դաղթականների։ Այդ առիթով վարչութիւնը բանակցութեան մէջ է Ժողովարանի աւագների հետ, որոնցից շատերը արդէն տուել են իրանց համաձայնութիւնը այդ գիշերվայ թատրոնի վարձը զիջել յօգուտ յիշեալ նպատակի։ Առաջին ներկայացումը կը կայանայ հինգշաբթի, մայիսի 30-ին։ Կը ներկայացվի Լէօի «Մելիքի աղջիկը»։

❀ Զինուոր. մինիստրին յանձնարարված է կարմիր գվարդիայի ծախսերի համար մանրամասն հաշիւ կազմել, իսկ առ այժմ այդ ծախսերի համար յատկացված է 100,000 րուբլի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 16 մայիսի

Այսօր «Մշակը». տպագրելով Եզրումի զինւորական միութեան կողմից գրած նամակը, իր կողմից աւելացրած ծանօթութեան մէջ ասում է, որ ես կորցրել եմ Քաղաքների Միութեան դրամներից 200,000 ր. և 400 պուդ շաքար իւրացրել։

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն հասարակութեան, որ «Մշակի» այդ փաստերը չեն համապատասխանում իրականութեան. ես ոչ մի կոպէկ, և այն էլ Փուսդօնի մէջ, չեմ կորցրել, և շաքարի պատմութեան հետ որևէ առնչութիւն չունեմ։

Տիգրան Աղամալեան

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, 18 մայիսի

Արամ Գէզչիպարոնեանի երեխայի մկրտութեան հացկերոյթի ժամանակ ընկեր Միսակ Տէր-Յարութիւնեանը մտաբերեց չքաւոր դաղթական որբերին, որոնք դարմանվում են Կրծանիս՝ Միրանուարի եկեղեցու գաւթում, մաս հասցնել այդ նոր սեղանից։ Խնդրեմ ձեր միջոցով յանձնէք վերոյիշեալ որբերին։ Նուիրատուներն են.

Միսակ Տ.-Յարութիւնեան 100 ր., Կարապետ և Սօնա Սօլոմօնով 100 ր., Գալուստ Ստեփանեան 50 ր., Արամ և Երեմ Գէզչիպարոնեան 50 ր., Սաթենիկ Տէր-Յարութիւնեան 20 ր., Վահան, Յակոբ և Շուշանիկ Ղոյփաչեան 30 ր., Վանուշ Մելքոնեան 15 ր., Միրտիչ Մելքոնով 10 ր., Սէրգօ Անիկեան 15 ր., Հայկանուշ Անիկեան 10 ր., Գաբրիէլ Վարդանեան 10 ր., Գրիգոր Բարսեղեան 10 ր., Արշակ Շավգարեան 8 ր., Բախշօ Ղազարբէգօվ 5 ր., Կարապետ Ղազարբէկով 5 ր., Արամ Նազարբէկով 5 ր., Թամա Ղազարեան 5 ր., Օսան Պարոնեան 3 ր., Աւետիք Զարուխչեան 4 ր., Բարսեղ Ջանջուլեան 5 ր.։ Գումարն է 460 ր.։

Գալուստ Ստեփանեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Թիֆլիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606» ու «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԲԺԻՇԿՆԵՐ՝
Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ։
Վ. Ի. ՄԱՅՆԵՐ—9—10 ժ. միզային կազմի և կանանց հիւ.
Ի. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկաձառ։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթու, վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Մ. Վ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ—1—2 ժ. կանանց հիւ. և մանկաբարձութիւն.
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎ—12 և կէս—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ։
ԵՐԵԿՈՆԵՐ
Ն. Ա. ԽՈՍՃԱՊՕՎԱ—5—7 ժ. կանանց հ. և վիրաբուժական.
Վճարը 1 ր.։ Չքաւորները ձրի։ [illegible] և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում է տուն
ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ
երկհարկանի, բաղկացած 12 սենեակից, [illegible] № 22, [illegible]
(ու.) 406. 2—1

ПОЛНОПРАВНАЯ ГИМНАЗІЯ
Пріемъ съ 20 мая во всѣ классы съ азбучнаго до 8 кл. включительно съ
ЛѢТНЕЮ ПОДГОТОВКОЮ.
Лѣтніе Бухгалтерскіе Курсы
Занятія съ 20 мая на русск. грузинск., армянск. языкахъ. Льготныя условія для учителей и офицеровъ.
Завед. ИВ. ЗАХ. ТЕРЪ-СТЕПАНОВЪ. Тумановская, д. № 13.
395. 10—6

Типографія «ЭКОНОМІЯ» Тифлисъ.